



Հրանտ Մաթևոսյան

Ոչ որ պիտի գիտենա, որ իր հետ չեմ

«Ահա հայտնվեց, ահա հեռանում է ինքներդ եք տեսնում թե ով» - իր ինքնակենսագրական գրքի անունն է: Մեզ անում է վկայել, թե անցորդը՝ ինքը, այս տանջված ու խեղճ աղամորդու և, ուրեմն, գրականության բարձրյալի պատգամախոսն էր: Եկավ անցավ և դեռևս չգնացողներին, առայժմ հիացած մնացողներին թողեց ձեռ ի բերան՝ թե ի՞նչ ազնիվ նյութերից է գնդված մայր երկիրը, ի՞նչ զավակների է ընդունակ և որպես մարդկության ու մարդկայնության հայրենիք դեռ ինչքա՞ն է արժանի ճախրելու տիեզերքում:

Իր խոսքն ու դավանանքն է՝ մտքի և խղճի ցուցադրում լինելուց առաջ գրականությունը խոստովանություն է. այլ խոսքով՝ գրականությունն այն է լինելու, ինչ որ ինքդ ես:

Դարձյալ իր խոսքն է՝ «Ոչ որ պիտի գիտենա, թե ես իր հետ չեմ». այլ խոսքով՝ ինքդ քեզ տեսնում ես ամենի ու ամենքի մեջ՝ պատանիների ու աղջիկների, կանանց ու տղամարդկանց, կենդանիների ու ծառերի, մանուկների ու ծերերի, և ինքդ քեզ նայում ես նրանց միջից, ավելի ճիշտ՝

Բայց ո՞վ կտար էն վայելքը, որ ինքս ինձ էլ չզգայի

Ու հավելի՛, ծավալվելի, ամենքի մեջ լինելի:

Լավ գրքեր շատերն են գրում. յուրաքանչյուր որ կարող է գոնե մի լավ գրքի հեղինակ լինել՝ իր կյանքը. բայց այնպիսի գրքեր, որ ժամանակակիցների ու հետնորդների համար աշխարհայացքային նշանակություն ստանան, հազվագյուտներին է տրված, և Մարոյանն այդ հազվագյուտների մեջ եզակի էր: Նա հեզնում ու խեթում էր գրականության այն օրենսդիրներին, ում համար մարդուց՝ մեր բոլորից ու յուրաքանչյուրից վերն ու լրիվը իրենց պատկերացումն է մեր մասին, և ովքեր տապակվում են իրենց

ագգային-դասային-ցեղային-դավանանքային նախապաշարումների մեջ և ջանում են սրբագործել այն, ինչը իրենց իսկ կարճ մտքի ծնունդն է: Այդտեղ նա ծիծաղում էր, որովհետև այդ օրենսդիրները նրան պատկերանում էին ոչ թե որպես մայրորդիներ, այլ ուղիղ Աստծու բերանից ելածներ:

Եվ դարձյալ իր գրքից է. «Գրում էի ներգաղթողների անգլերենով. դա վայրագություն էր լեզվի հանդեպ, հրատարակիչները սարսափած ետ էին քաշվում, բայց ես այդ էի, և նրանք ի վերջո տեղի տվեցին»: Հեռուստատեսային հարցազրույցի ժամանակ լրացրեց. «Ես ճնշվածների կողմն եմ. եթե այդ ներգաղթողները՝ իմ հայրը, հորեղբայրը, ազգականներս, մշեցիները, բիթլիսցիները, Ամերիկայի մեջ արհամարհված մարդիկ չլինեին, թերևս գրեի ո՛չ նրանց մասին և ազգանունս էլ Սարոյա՛ն չթողնեի, ինչպես մեր հայրենակից մեկը՝ որ շնորհալի գրող էր, բայց իր ազգությունից խուսափեց. իր ցեղը, ծնողներին, ազգությունը թաքցնող որևէ մեկը չի կարող ճշմարիտ գրող լինել»: Եվ, օրեր անց կամ առաջ, գոհունակության թեթև ժպիտով՝ «Գիտե՞ս, ճապոն տղայոց մեջ կա՛ որ անուն Արամ է. իմ գիրքերես առած են»: Այդպես:

Հորժամ քնարս իմ ցրտանա՛

Սիրույն տալով վերջին բարև -

Երթամ ննջել գիմ Կիլիկիա՛

Աշխարհն, որ ինձ ետուր արև:

Բոլոր սերերը մարելուց հետո ցրտած քնարով միակ անմարելիին դառնալը շատ ու շատ նուրբ հոգիների վերջին ճախրն է, բայց սհա հե՛նց սկզբից, հե՛նց պատանեկան հպարտ հասակում, երբ ամբողջ աշխարհն է գրկաբաց մայր ու սիրուիի թվում, ետդարձի ճանապարհ բռնել դեպի «արնավառ Հայաստան յարը»՝ սա արդեն եզակիորեն եզակի շնորհ է, սա արդեն սերտաճում է հանճարի բուն էությունից, այսինքն թե այդ ճանապարհը լքելը հրաժարումն կլիներ գրականության բուն խորքերը տանող ճանապարհից: Նա անընդհատ հայրենիքի ճանապարհին էր: Կարճ՝ հայրենիքը նա ճշմարիտ գրականության ճանապարհին գտավ, և խիզախ, անկասեցնելի հոգու, ոգեկան այդ ձեռքբերումն արդեն անկապտելի էր որպես մեծ գրականության էություն:

Եվ, իհարկե, դեպի հայրենիք այդ շարունակական, անվախճան, անընդհատ սկսվող և երբեք ավարտվող ճախրը պիտի ավարտվեր գեղեցկորեն նույնքան շիտակ, ինչպես իր ողջ կյանքն ու գործն էր, մի վայրէջքով՝ աճյունը հայրենի հողին ի պահ տալով. մարմինը, ուր ինքն էր բնակվում, հայրենի երկնքից աճյուն

դարձած պիտի իջներ հայրենի հողին: